

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՎԱՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԱՐԳԱՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԱԼՔԵՐՏԻ**

**ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՅՈԳԵՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻՆ**

**ԺԳ.00.05.-«Սոցիալ-մշակութային գործունեության տեսություն և  
կազմակերպում» մասնագիտությամբ մանկավարժական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2013**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական դեկան՝ Դրվեստագիտության  
պրոֆեսոր Հ. Յ. Դակոբյան

Պաշտոնական ընդիմախոսներ՝ մանկավարժական  
դոկտոր,պրոֆեսոր Լ. Ս. Ներսիսյան

մանկավարժական գիտությունների  
թեկնածու,դոցենտ Գ. Յ. Դակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Ս. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական  
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի  
19-ին՝ ժամը 14.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ  
շնորհող ԲՈՅ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Դասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:  
Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ.քարտուղար,  
մանկավարժական գիտությունների թեկնածու,  
դոցենտ՝

Ա. Յ. Սվաջյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Մեր անցումային հասարակությունը, որին հատուկ են արժեքային համակարգերի, հասարակական ընդհանուր նորմերի շարունակական վերափոխումներն ու վերա ձևումները, կարծես թե երկրորդ պլան է մղել մարդու հոգևոր աշխարհը՝ աղքատացնելով և աղճատելով այն: Այսօր, երբ նյութականացվում են ողջ կյանքն ու հասարակական հարաբերությունները, գնալով ավելի քիչ տեղ և ժամանակ է հատկացվում հոգևոր մշակույթին, հոգևոր իդեալներին, արվեստին ու գրականությանը, որի արդյունքը հոգևոր արժեքների աստիճանական անկումն է:

Մեր օրերում հրատապ է անհատի հոգևոր զարգացման հիմնահարցը ազգային մշակույթի, արժեքների պահպանման և գալիք սերունդներին փոխանցման համատեքստում: Խորհրդային շրջանում, մեղմ ասած, այնքան էլ չէր խրախուսվում ազգային մշակույթը, մասնավորապես՝ ազգային արվեստը: Խորհրդային հասարակարգի անկումից հետո այդ արգելքները վերացել են, և կան բոլոր նախադրյալները ազգային մշակույթի, աղտեքային համակարգի, ավանդույթների ու սովորույթների պահպանման, կայացման, հարստացման ու փոխանցման համար: Սակայն, ցավոք, այս ամենը հեշտ կարող է թվայի միայն առաջին հայացքից: Իրականում, ներկա հայկական իրականության առաջ ծառացած են նոր խնդիրներ: Դայրենական իրականությունն այժմ գտնվում է օտար մշակույթների հզորագույն ազդեցությունների ոլորտում, այն էլ՝ հախուրն ու տարերայնորեն: Դայ հասարակությունը օտարարմուծությունները սովորաբար ընդունում է իրեն հատուկ «հայկական հյուրընկալությամբ», կամ էլ դրանք պարզապես պարտադրվում են աշխարհի հզորների կողմից: Շատ հաճախ դիմակայել նման գայքակղություններին՝ չկորցնելով ազգային մշակութային «Ես»-ը, այնքան էլ հեշտ չէ: Դենց այս պարագայում է կարևորվում մամկավարժագիտության առաջելությունը՝ դրու թյունը շրտելու առումով: Այն հոգևոր և գեղագիտական դաստիարակության միջոցով պետք է կարողանա դաստիարակել այնպիսի սերունդ, որը կլինի մեր դարավոր հայ մշակույթի և միաժամանակ՝ առաջաեն համամարդկային մշակութային արժեքների կրողը, քանզի միայն ազգային հարուստ մշակույթի վրա է հնարավոր կառուցել համաշխարհային, համամարդկային մշակույթ:

Անձի հոգևոր զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման գործում չափազանց գերակա տեղ է գրավում հայ մշակույթը, որը հարուստ է պատմականորեն կազմավորված ավանդույթներով:

Դրանց ժամանակագրությունը սկսվել է դեռևս վաղ հեթանոսական շրջանից, և դրանք մեզ են հասել ամենատարբեր ժեսերի, հեքիաթների ու

եպոսի, երգ ու պարի, խաղերի միջոցով: Դրանք ազգային հոգևոր արժեքների, սոցիալական կենսափորձի պահպաննան, սերնդեսերունդ փոխանցման միջոց են:

Կրթության բարեփոխումների ներկա փուլում խիստ ժամանակահունչ է կրթադաստիարակչական աշխատանքների բովանդակային վերահիմաստավորումը, և դրա միջոցով՝ դպրոցականների հոգևոր զարգացման և դաստիարակության գործընթացի լիարժեք կազմակերպումը:

Անկասկած, ժամանակակից փուլում կրթական գործընթացը պետք է ուղղված լինի դպրոցականների գեղարվեստական կրթության անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, որը հաճարվում է ոչ միայն ժամանակակից անհատի աշխարհածանաչողության և գեղարվեստական փորձի ընդլայնման գործոն, այլև հոգևոր-քարոյական զարգացման միջոց:

Գրականության և արվեստի ստեղծագործություններն ընդունելով որպես կյանքի ու մարդկային հարաբերությունների գեղարվեստական արտացոլման հիմնական տեսակներ՝ ընդգծում ենք, որ անհատը, չփելով արվեստի հետ, եզակի հնարա Վորություն է ստանում այն ընկալել ու ընդունել որպես հոգևոր հարստացման գործոն:

Հոգևոր դաստիարակության կարևորագույն ոլորտ են համարվում տվյալ գործընթացում անձի կենսական ոլորտի վրա հիմնված ստեղծագործական ձևերի բազմակողմ փոխագեցությունները:

Անձի հոգևոր զարգացման հիմնախնդիրը դիտարկվել է մի շարք հետազոտություններում՝ Տ. Ռաշմանյան, Ա. Բահարյան, Ա. Բայան, Լ. Ս. Ներսիսյան, Գ. Յ. Ջակոբյան, Յու. Վ. Յուզբաշյան, Բ. Խ. Տեպյով, Պ. Մ. Յակոբսոն, Թ. Ս. Գազման, Ն. Գ. Գրիգորյան, Ե. Լ. Կյավերին և այլն: Դրանցում ուսումնասիրվում են անծնավորության ներաշխարհի հասարակական-մանկավարժական այն միջոցները, որոնք թույլ են տալիս հոգևոր դաստիարակության խնդիրը վերլուծել որպես անհատի ինքնածանաչման գործընթաց:

Հիմնախնդիրի վերաբերյալ եղած փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ կարգվականաչափ տեսական հիմք գրականության և արվեստի պատմության դասերին դպրոցականների հոգևոր զարգացման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար: Միևնույն ժամանակ մեր ուսումնասիրությունները և մեր բազմամյա մանկավարժական փորձը ցույց են տալիս, որ այսօր մեր կրթական հաստատություններում հատկապես հանրակրթական դպրոցում, դպրոցականների հոգևոր զարգացումն ու դաստիարակությունը գործնականում անբավարար է իրականացվում:

Սակայն, արժևորելով հիմնախնդիրի վերաբերյալ եղած հետազոտություններն ու հայեցակարգային մոտեցումները, պետք է նշել, որ դպրոցականների հոգևոր զարգացման հիմնախնդիրը և հոգեբանաման-

կավարժական, և մեթոդական տեսանկյուններից դեռևս մնում է չուսումնասիրված:

Մեր հետազոտության հիմնախնդիրը ներկա ժամանակաշրջանի պահանջների և հայ դպրոցում դպրոցականների հոգևոր զարգացման ու դաստիարակության առկա իրավիճակի միջև հակասությունների հաղթահարման սոցիալ-մանկավարժական պայմանների որոշումն ու հիմնավորումն է:

Արվեստների և գրականության ազդեցության շնորհիվ անձի հոգեվոր զարգացման խնդիրի լուծման արդիականությունը պայմանավորված է ոչ միայն հոգևոր զարգացման մեթոդիկայի անբավարար մշակմամբ, այլև գործնական նշանակությամբ: Այն պայմանավորված է նաև դպրոցականի անձի հոգևոր կերպարին առաջադրվող հասարակական-նշակութային պահանջներով, որտեղից էլ ձևավորվել է մեր ատենախոսության թեմայի ընտրությունը՝ «Դպրոցականների հոգևոր զարգացման սոցիալ-մանկավարժական պայմանները գրականության և արվեստի պատմության պարապմունքներին» խորագրով:

**Հետազոտության նպատակն** է բացահայտել և գիտափորձով հիմնավորել դպրոցականների հոգևոր զարգացման սոցիալ-մանկավարժական պայմանները գրականության և արվեստի պատմության պարապմունքներին:

**Հետազոտության օբյեկտը** հանրակրթական դպրոցներում սովորողների հոգևոր զարգացման սոցիալ-մանկավարժական պայմաններն են:

**Հետազոտության առարկան** դպրոցականների հոգևոր զարգացման գործընթացն է գրականության և արվեստի պատմության պարապմունքներին:

**Հետազոտության վարկածը.** դպրոցականների հոգևոր զարգացման գործընթացն ավելի արդյունավետ կլինի, եթե

- արվեստ-գրականություն-մարդ փոխազդեցությունը դիտարկվի որպես հոգևոր զարգացման կարևոր և ամերաժեշտ գործընթաց և կրթադաստիարակչական գործընթացի անքակտելի մաս,

- հոգևոր զարգացման և դաստիարակության գործընթացը կազմակերպի որպես կենսակերպ՝ ունենալով որոշակի դրսերում և կառուցվածք,

- մշակվի, հանրակրթության մեջ ներդրվի դպրոցականների հոգևոր զարգացման մոդելը՝ հաշվի առնելով հոգևորի, գրականության և արվեստի միասնության հանգանանքը:

**Հետազոտության խնդիրներն են.**

1.Հոգեբանամանկավարժական, հասարակական-փիլիսոփայական, արվեստագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա

բացահայտել դպրոցականների հոգևոր զարգացման հիմնական ուղղությունները, տեսական և գործնական տեսանկյունները:

2. Մշակել դպրոցականների հոգևոր զարգացման մոդելը՝ որպես նրանց իմացական-ձանաչողական, հոգական, հոգևոր պահանջ մունքների ձևավորման և բավարարման գործընթացների իրականացման համալիր:

3.Բացահայտել և գիտափորձով հիմնավորել դպրոցականների հոգևոր զարգացման արդյունավետությունը ապահովող սոցիալ-մանկավարժական պայմանները գրականության և արվեստի պատմության պարապմունքներին, որոնք ներառում են նրանց հոգևոր պահանջմունքների և հետաքրքրությունների բավարարման ուղիները, միջոցները, ձեւերն ու մեթոդները:

4. Մշակել և գործնականում կիրառել մեթոդական հանձնարարականներ գրականության և արվեստի պատմության պարապմունքներին դպրոցականների հոգևոր զարգացման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

**Հետազոտության մեթոդաբանական հիմք** են հանդիսացել փիլիսոփայական գաղափարները գեղարվեստական և հոգևոր մշակույթի ստեղծման գործում: Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել նաև հոգեբանամանկավարժական, հասարակական-մշակութային, արվեստագիտական հայեցակարգերը դպրոցականի անձի հոգևոր զարգացման և դաստիարակության, ինչպես նաև արվեստի, գեղարվեստական գրականության իմացության չափանիշների ու սկզբունքների, հասարակական կյանքի և կրթության բովանդակության մարդասիրական միտումների վերաբերյալ:

Այս խնդրին իրենց աշխատություններում անդրադել են Ն. Ա. Բերյաևը, Ս. Ս. Կագանը, Վ. Ֆ. Ռյաբովը, Ա. Կ. Ուլերովը, Վ. Ֆրանկը, Է. Ֆրոնձնը, Ն. Լոսսկին, Յ. Մարկովեն, Խ. Աբովյանը, Մ. Թաղիաղյանը, Ս. Նալբանդյանը, Շ. Աղայանը, Մ. Մանուրյանը, Ռաֆֆին, Ռ. Պերպերյանը, Ա. Բահաթրյանը, Ա. Բայսան, Լ. Ս. Ներսիսյան, Գ. Յ. Դակորյան, Ս. Լ. Զանիկյան, Յ. Գ. Զալֆիմյան և այլք:

Հետազոտության համար բազա են հանդիսացել սոցիալական և մանկավարժական ինտեգրացիայի տեսությունները, մանկավարժական երևությունների և գործընթացների համակարգային վերլուծությունը, գործունեության անձնային դերի և անձի զարգացման բազմագործուն բնույթի, հոգևոր արժեքների ձևավորման տեսությունները:

Նշված տեսական-մեթոդաբանական հիմքերը թույլ տվեցին անձի հոգևոր զարգացման գործընթացը դիտարկել երկու տեսանկյունով՝

- սոցիալ-մշակութային՝ որպես անձի ինտեգրատիվ որակ,

- սոցիալ-մանկավարժական՝ որպես կրթության և դաստիարակության նպատակ:

### **Հետազոտության մեթոդները.**

Ելելով հետազոտության մեջ առաջադրված հիմնախնդրի լուծման նպատակից՝ կիրառվել են հետևյալ մեթոդները. հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության տեսական վերլուծություն, հայտորոշիչ գիտակիրճ (անկետավորում, գրույց, հարցազրույց, հետազոտում) երեք փուլերով:

Հետազոտության համար փորձարարական բազա են հանդիսացել Երևանի թիվ 6, 16, 94 դպրոցները, Արագածոտնի Վրագածոտն գյուղի միջնակարգ դպրոցը, Սևան քաղաքի մանկապատամեկան ստեղծագործական կենտրոնը: Հետազոտության մեջ ներգրավված են եղել 1000 աշակերտ, 27 ուսուցիչ:

Հետազոտությունն անցկացվել է երեք փուլով.

**Առաջին փուլը (2006-2007թթ.)** ներառել է հոգենոր զարգացման և դաստիարակության հիմնախնդրի ների վերաբերյալ հոգեբանամանկավարժական, արվեստաբանական, փիլիսոփայական գրականության տեսական վերլուծություն, ելակետային դրույթների, հետազոտության մեթոդների որոշում:

**Երկրորդ փուլը (2007-2008թթ.)** ընդգրկել է գիտափորձը: Այս փուլում ընթացող փորձարարական աշխատանքները ներառել են դպրոցականների հոգենոր զարգացման և դաստիարակության նպատակների, խնդիրների, բովանդակության, ձևերի և մեթոդների համակարգի մշակումը սոցիալ-մանկավարժական պայմանների հնարա վոր ապահովմամբ, որը մեծ չափով նպաստում է հիմնախնդրի լուծման արդյունավետությանը:

**Երրորդ փուլը (2009-2010թթ.)** հաստատող փուլն է: Այս փուլում մշակվել, համակարգվել, ստուգվել, վերլուծվել և ընդհանրացվել են գիտափորձի արդյունքները, շարադրվել է հետազոտության բովանդակությունը, ձևակերպվել են եզրակացությունները, նշվել են ուղիներ գործնականում դրանց ներդրման համար:

### **Հետազոտության գիտական նորույթը.**

- Բացահայտվել և հիմնավորվել են այն սոցիալ-մանկավարժական պայմանները, որոնք նպաստում են դպրոցականների հոգենոր զարգացմանը գրականության և արվեստի պատմության դասընթացներին: Մասնավորապես գրականության և արվեստի մյուս տեսակների ինտեգրումը դիտարկվում է որպես դպրոցականների հոգենոր զարգացման առանցքային գործոն:
- Մշակվել և փորձարկվել են դպրոցականների հոգենոր զարգացման ՄՈԴԵԼԸ և սոցիալ-մանկավարժական պայմանները (նպա-

տակադիր խնդիրները, բովանդակությունը, ձևերը, միջոցները, մեթոդները գրականության և արվեստի պատմության պարապ- մունքներին:

- Կրթական գործընթացում դպրոցականների հոգևոր զարգացման ուղղությամբ իրականացնել համալիր գործընթաց՝ ներառելով դպրոցականների ինացական, գեղագիտական, հոգևոր և գործ- նական ոլորտները:

### **Հետազոտության տեսական նշանակությունը.**

- Բացահայտվել է «հոգևոր», «հոգևոր զարգացում» և «հոգևոր դաստիարակություն» հասկացության եւրիունը՝ որպես անձի ին- տեգրատիվ հատկանիշ՝ իմք ունենալով իմնախնդրի վերա- բերյալ գիտանակավարժական գրականությունը, հետազոտող- ների հայեցակարգային դրույթները:
- Մշակվել են դպրոցականների հոգևոր զարգացման և դաստիա- րակության հատկանիշների մակարդակները:
- Սահմանվել են հոգևոր զարգացման չափանիշները գրակա- նության և արվեստի պատմության պարապմունքներին:

**Հետազոտության գործնական նշանակությունը:** Հետազոտության տեսական վերլուծության հիման վրա մշակվել են գիտամեթոդական հանձնարարականներ, ուսումնաօժանդակ ձեռնարկներ, գրականություն, արտառուսումնական պարապմունքների ծրագրեր և կամընտրական դաս- ընթացներ (ավագ դպրոց), մանկավարժական պայմանների համալիրը, որոնք կարող են օգտակար լինել հանրակրթական դպրոցում արվեստի ցիկլի առարկաների և գրականություն դասավանդող ուսուցիչներին դպրոցականների հոգևոր զարգացման գործընթացը կազմակերպելիս:

### **Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.**

1. «Հոգևոր», «հոգևոր զարգացում», «հոգևոր դաստիարակութ- յուն» հասկացությունների տեսական վերլուծության արդյունքները փիլի- ստիայական, սոցիալ-մանկավարժական պայմանների տեսանկյուննե- րից:

2. Դպրոցականների հոգևոր պահանջմունքների և նրանց հոգևոր զարգացման միասնության անհրաժեշտության հիմնավորումը:

3. Գրականության և արվեստի առարկաների դասավանդման ընթացքում և առանձին ուսումնաօժանդակ ձեռնարկների միջոցով դպրոցականների հոգևոր զարգացման ուղղված սոցիալ-մանկավար- ժական պայմանների առաջադրումը, որոնք նպաստում են ինչպես դպրոցականների հոգևոր դաստիարակության գործընթացի արդյունավե- տության բարձրացմանը, այնպես էլ նրանց արժեքային համակարգի ձևավորմանը:

4. Դպրոցականների հոգևոր զարգացման և դաստիարակության գործում «Գրականություն» և «Արվեստի պատմություն» առարկաների արժևորումը՝ որպես դպրոցականների դաստիարակության գործընթացի կարևորագույն և անբաժանելի մաս:

**Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը.**

Ապահովված է դպրոցականի հոգևոր դաստիարակության ոլորտում հասարակական-մշակութային, հոգեբանամանկավարժական գիտությունների ժամանակակից խնդիրների համալիր վերլուծությամբ, փորձարկվողների ընդգրկվածությամբ, գիտափորձի վերլուծությունների համադրնամբ, ստացված արդյունքների վիճակագրական մշակմամբ, ատենախոսի անձնական մասնակցությամբ ու ներդրումով:

**Հետազոտության փորձաքննությունը** կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը ներառում է ներածությունը, երկու գլուխները, եզրակացությունը, գրականության ցանկն ու հայելվածները:

Այն բաղկացած է տպագիր 124 էջից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Դպրոցականների հոգևոր զարգացման գիտատեսականիմքերը հանրակրթական դպրոցում» խորագիրը կրող առաջին գլուխը ներառում է երկու ենթագլուխ:

Առաջին «Հոգևոր զարգացման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները հանրակրթության մեջ» ենթագլխում դիտարկված են «հոգի», «հոգևոր» հասկացությունները, դրանց վերաբերյալ եղած միշտը մակավառությունների, փիլիսոփաների, հոգեբանների հայեցակարգային մոտեցումները:

Այս ամենի արդյունքում պարզ է դարձել, որ «հոգի», «հոգևոր» հասկացությունները ի հայտ են եկել դեռևս վաղ ժամանակներում և դարձել անտիկ փիլիսոփաների՝ Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, ավելի ուշ՝ հայ հոշորագույն փիլիսոփա Դավիթ Անհաղթի ուսումնասիրության առարկա: Ժամանակակից փիլիսոփայական միտքը ևս անդրադարձել է այս հասկացությունների ուսումնասիրնանը՝ ի դեմս Ն. Ա. Բերյալսի, Ս. Ս. Կագանի, Վ. Ֆ. Ռյաբովի, Ա. Կ. Ռվեդովի, Վ. Ֆրամնի, Է. Ֆրոնմի, Ն. Լոսսկու, Յ. Մարկովեի և այլոց, որոնք հոգևորը հանրության մարդու բարոյական հատկանիշների և արժեքների հանրագումար, մարդու

գոյության բուն էությունը, նրա կենագործունեության մի մասը, ինքնատիպությունը, ինքնաճանաչումը:

Աստվածաբանները ևս անդրադարձել են այս խնդրին՝ համարելով, որ հոգին աննարմին, անմահ, աննյութ ուժ է, որը գոյություն ունի մարմնից անկախ, հանդերձյալ աշխարհում, իսկ հոգևորը տեսնում են Աստծուն ճանաչելու, Աստծու էությունը գիտակցելու, Աստծու կերպարին նըմանվելու մեջ:

Հոգևորի հիմնախնդրի վերլուծությանը մեր իրականության մեջ անդրադարձել են հայ մանկավարժական մտքի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Խ. Արովյանը, Մ.Թաղիառյանը, Մ. Նալբանդյանը, Դ. Աղայանը, Մ. Մամուրյանը, Ռաֆֆին, Ռ. Պերպերյանը, Ա.Բահաթրյանը, Գ. Զակորյանը:

Առաջին գլխի երկրորդ՝ «Դպրոցականների հոգևոր զարգացման սոցիալ-մանկավարժական պայմանները» ենթագլխում, վերլուծելով հայ և օտար մանկավարժների ուսումնասիրությունները, ներկայացրել ենք այն բոլոր գործողները, որոնք կարող են այս կամ այն չափով ազդել դպրոցականների հոգևոր զարգացման ու դաստիարակության վրա: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մայրենի լեզուն անձի հոգևոր զարգացման առաջնային և կարևոր գործոն է: Մեր լեզվի ու մշակույթի շնորհիվ է, որ հայ ժողովուրդը գոյատևել է մինչև այսօր, դիմակայել ամեն արհավիրքի: Այն մեր ազգային անվտանգության, ազգապահպանման անսասան գրավականն է:

Անձի հոգեաշխարհի վրա ազդող և այն հարստացնող կարևորագույն գործոն է գրականություննը, որը բացահայտում է մարդու հոգևոր կյանքի հակասություններն ու ելքեցները, հույզերն ու զգացմունքները: Գրականությունը ունի ճանաչողական, հոգևոր-քարոյական մեծ արժեք, որը բնութագրում է նաև հոգևոր զարգացման չափանիշները: Այսինքն՝ գրականությունը հոգեկրթիչ դեր է կատարում մարդու կյանքում, հոգևոր ուղիներ բացում նրա համար ինքնակատարելագործվելու, հաղթահարելու դժվարությունները:

Անգնահատելի է բնության դերը դպրոցականի անձի հոգևոր ներաշխարհի ձևավորման և զարգացման գործում:

Բնությունը անձի հոգևոր կերտվածքի ձևավորման, ներաշխարհի հարստացման հզոր ակունք է, լավատեսության, ոգեշնչման աղբյուր: Բնության պահպանումը ինքնին մարդու պահպանման գործնթաց է, քանի որ մարդը բնության անքակտելի մասն է. բնության ներդաշնակության խաթարումը մարդու խաթարումն է, հոգևոր աղճատումն ու մարդու կերպի աղավաղումը:

Այս առումով չպետք է անտեսել նաև արվեստի գերակայությունը: Արվեստի բոլոր տեսակները՝ երաժշտությունը, նկարչությունը, քանդակագործությունը, ճարտարապետությունը, թատրոնը, կինոն, լուսանկարչությունը և այլն, իրենց խորը կնիքն են դնում մարդու անհատականության և հոգևոր արժեքների և հոգևոր մշակույթի վրա: Երաժշտությունը արվեստի այն առանձնահատուկ տեսակն է, որում անփոփոք են մարդկության իմացական, հոլգական, գեղագիտական լիցքերը, մեղեդու ռիթմի ու ներդաշնակության մեջ խտացած ժողովրդի հոգևոր մշակույթի ողջ գունագեղ երանգապնակը: Երաժշտությունը հուզում է մարդուն հարուցելով նրա հոգում ամենատարբեր հոյեցերի ու զգացմունքների անսահման բազմազանությունը: Երաժշտական կերպարն ամբողջովին հյուսված է մարդկային զգացմունքներից ու հոգեկան ապրումներից: Երաժշտությունը անձի հոգևոր ներաշխարհի վրա խոր ազդեցություն է թողնում՝ նպաստելով նրա հոգևոր-բարոյական արժեքային համակարգի ձևավորմանը: Վստահաբար կարելի է նշել, որ անձի հոգևոր ներաշխարհի ձևավորման և ներդաշնակ զարգացման էական կողմ:

Հոգևոր զարգացման հզոր ազդակ է նկարչությունը: Յայկական միջնադարյան մանրանկարչությունը իր գունագեղությամբ, անկյուննելիությամբ գեղեցիկի բարձրագույն արտահայտություն է: Յայկական մանրանկարչության շքեղ ավանդույթները իրենց արտացոլումն են գտել հայ նկարիչների ստեղծագործություններում, որոնք անձի հոգևոր ներաշխարհի ձևավորման և հարստացման կարևոր միջոց են:

**Գիտությունը** որպես անձի հոգևոր զարգացման աղբյուր, նույնպես կարևոր դեր ունի, քանի որ հատկապես գիտական հիմքի վրա է իրականացվում անձի կրթական գործընթացը: Այն հզոր գործոն է անձի զարգացման, նրա հոգևոր-ստեղծագործական հնարավորությունների բացահայտման համար:

Մարդկության պատմության ընթացքում անձի հոգևոր զարգացման կարևոր աղբյուր է եղել կրոնը: Կրոնը դարերի ընթացքում դաստիարակել է մարդկությանը, նրան հոգևոր լիցքեր հաղորդել, ազնվացրել, վեհացրել, կատարելագործել մարդկային հարաբերությունները և բարերը: Կրոնը մարդուն տվել է յուրօրինակ բարոյական նորմեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են մարդկանց հղեալները, ծգտումները, արժեքները, ըմբռնումները, բարերը, կենսաձևը, բնության ուժերի նկատմամբ վերաբերմունքը, լյանքի սերն ու իմաստավորումը:

Սովորողների հոգևոր զարգացման կարևորագույն գործոն է **աշխատանքը**, որի ընթացքում ձևավորվում և ամրակայվում են անձի բարոյականային որակները, սերը դեպի աշխատանքը, արարել բերկրանքը, իր աշխատանքի արդյունքը տեսնելիս, ստեղծագործական ոգին:

Աշխատանքի երկրորդ՝ «Արվեստի պատմության և գրականության պարապմունքները՝ որպես դպրոցականների հոգևոր զարգացման գործընթաց» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ «Դպրոցականների հոգևոր զարգացման մոդելը՝ որպես սոցիալ-մանկավարժական գործառույթ» ենթագլխում, վերլուծելով զանազան մոտեցումներ, մենք առանձնացրել ենք մանկավարժական տեսության մեջ և պրակտիկայում դրանցից առավել տարածվածները:

Առաջին մոտեցում՝ ընդհանուր, որը ենթադրում է դպրոցականների հետ մասսայական աշխատանքի կազմակերպում՝ գրական-երաժշտական երեկոներ, էքսկուրսիաներ թանգարաններ, համերգների, թատերական ներկայացումների դիտումներ և այլն:

Երկրորդ մոտեցում՝ տարբերակված, որը ենթադրում է դպրոցականների ներգրավումը գրականության, կերպարվեստի, քանդակագործության, թատերական և այլ խմբակներում:

Երրորդ մոտեցումը ենթադրում է անհատական աշխատանք դպրոցականների հետ՝ նրանց ունակությունները, հակումները, կարողությունները ուսումնասիրելուց հետո:

Չորրորդ մոտեցումը գործունայինն է, որը ենթադրում է անձի հոգեվոր ուղղվածության զարգացում՝ ապահովելով նրա հոգևոր-բարոյական որակների զարգացումը կոնկրետ գործունեության մեջ ստուգելու հնարավորությունը:

Խնդրի մանկավարժական վերլուծությունը հիմք ընդունելով՝ մենք կառուցել կառուցել ենք հանրակրթական դպրոցի դպրոցականների հոգևոր դաստիարակության մոդելը, որը հիմք է ծառայում հոգևոր զարգացումը փուլային ընթացքով դիտարկելու համար:

Մենք օգտագործել ենք հետազոտության հայտորոշիչ մեթոդներ՝ դիտում, անկետավորում, հարցազրույց, թեստավորում, անհատական ու խմբային զրույցներ, պրակտիկ գործունեության արդյունքների վերլուծություն և այլն: Օգտվելով այս մեթոդներից՝ մենք ուսումնասիրել ենք հանրակրթական դպրոցների 1000 դպրոցականի, 27 ուսուցիչի և 100 ծնողի:

Հետազոտության ընթացքում ուսուցիչներն ու ծնողները նշել են այն հիմնական գործոններն ու պայմանները, որոնք ազդում են դպրոցականների հոգևոր զարգացման վրա և նշել նրա առավել բնորոշ ցուցիչները: Բոլոր ախտորոշիչ միջոցներն ուղղված են սովորողների հոգեվոր-բարոյական հատկանիշների ձևավորվածության մակարդակների ուսումնասիրմանը:

Գիտափորձի ընթացքում մշակվել է դպրոցականների հոգևոր զարգացման մոդել՝ որպես նրանց ինացական-ճանաչողական, հոլովական, հոգևոր պահանջմունքների ձևավորման և բավարարման գործընթացմե-

ոի իրականացման համալիր, որը միավորում է հոգևոր դաստիարակության գործողների ազիցությունը:

## Դպրոցականների հոգևոր զարգացման մոդելը

|  |  |
|--|--|
| Հոգևոր զարգացման նորմելի բաղադրիչները  | Կազմակերպչական մեթոդական ապահովումը  |
| Նպատակները՝ <ul style="list-style-type: none"> <li>մանկավարժական</li> <li>հոգեբանական</li> <li>սոցիալական</li> </ul>   | Ապահովել հոգևորի և հոգևոր պահանջմունքների բավարարումը՝ որպես անձի ինտեգրատիվ որակի զարգացում, դպրոցականների հոգևոր դաստիարակության գործընթաց,  |
| Գործառույթները՝ <ul style="list-style-type: none"> <li>ուսուցողական</li> <li>դաստիարակող</li> <li>զարգացնող</li> </ul>   | Դպրոցականների հոգևոր ներաշխարհի ուսումնասիրում<br>Ապահովել հոգևոր բավարարվածության և սոցիալականացման պահանջները հասարակության մեջ  |
| Հոգևոր զարգացմանն ուղղված գործունեության բովանդակությունը ըստ փուլերի՝<br>1-ին փուլ՝ որոնողական,<br>փորձարարական<br>2-րդ փուլ՝ հավաստող գիտափորձ<br>3-րդ փուլ՝ ձևավորող գիտափորձ | Հոգևոր, բարյոյակերպական գիտելիքների պրակտիկ գործունեության կարողությունների ձեռքբերում,<br>Հոգևոր-բարյոյական կյայացման, հոգևոր ներաշխարհի հարստացման, հուզականային ոլորտի զարգացման ուղղությամբ դիրքորոշման ձևավորում,<br>Հոգևոր-բարյոյական որակների զարգացում և նախապատրաստում կյանքին  |
| Հոգևոր զարգացմանն ուղղված գործունեության բովանդակությունը ըստ փուլերի՝<br>1-ին փուլ՝ որոնողական,<br>փորձարարական<br>2-րդ փուլ՝ հավաստող գիտափորձ<br>3-րդ փուլ՝ ձևավորող գիտափորձ | Հոգևորի որպես անձի որակական հատկանիշի, տեսության ու պրակտիկայի ձևավորման ուսումնասիրում, յուրաքանչյուր դպրոցականի համար հոգևոր զարգացման ուղղությամբ տեղեկատվական և ախտորոշիչ աշխատանքներ<br>Դպրոցականների հոգեկոր զարգացնության մակարդակի ուսումնասիրում<br>Հոգևոր դաստիարակության ծրագրեր տարիքային տարրեր փուլերի համար ծրագրերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, աշխատանքային տետրորի, քրեստոնատիանների մշակում |
| Ձևեր՝<br>ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում <ul style="list-style-type: none"> <li>միջոցառումների կազմակերպում</li> <li>արտառուսումնական գործունեության</li> </ul>   | Հատուկ դասընթացներ, սեմինարներ, նախասիրական պարապմունքներ և այլն<br>Գրական երեկոներ, քատերական ներկայացումներ, եքսկուրսիաներ, գիտական հաղորդումներ, շարադրություններ, գեղարվեստական աշխատանքների ցուցահանդեսներ և այլն<br>Խմբակներ, կլոր սեղաններ, տոններ,   |

| կազմակերպում   | գրական-երաժշտական ցերեկույթներ և այլն   |
|--|---|
| Մեթոդները  |   |
| <ul style="list-style-type: none"> <li>ուսումնական</li> <li>ախտորոշիչ</li> <li>գործունեության կազմակերպում, հսկողություն և վերահսկողություն</li> </ul> | Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառում<br>Անձի հոգևոր գարգացվածության մակարդակի ուսումնասիրման մեթոդներ<br>Թեստավորում հպարցականների հոգևոր-բարոյական հատկանիշների գարգացածության մակարդակի ախտորոշման նպատակով   |
| Միջոցներ՝  | Դպրոցականների անձի ուսումնասիրման մեթոդներ, մեթոդական ծեռարկների, հատուկ դասընթացների, աշխատանքային տեսրերի, գրական լավագույն երկերի, արվաստի տեսակների վերաբերյալ, տեսա-ֆիլմերի, համակարգչային ծրագրերի հանակարգ   |
| Զափանիշներ՝  | <ul style="list-style-type: none"> <li>ճանաչողական</li> <li>հուզական</li> <li>կամային</li> <li>գործունային</li> </ul> <p>Հոգևոր խմելի նկատմամբ հետաքրքրություն, գիտելիքների ու պահանջունքների առկայություն,<br/>Հոգևորի իմանախմբների մկանամբ դրական վերաբերմունք, սոցիալական ակտիվություն,<br/>Հոգևոր գարգացման գործում պահանջմունքների և կամային ջանքերի առկայություն<br/>Հոգևոր-բարոյական, գնազագիտական, էկոլոգիական և այլ գիտելիքների տիրապետման ուղղությամբ ակտիվ դիրքորոշում</p> |

Երկրորդ գլուխ երկրորդ՝ «Դպրոցականների հոգևոր գարգացման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները գրականության և արվեստի պատմության պարագնունքներին» ենթագլխում ուսումնասիրված են հատկապես գրականության, արվեստի պատմության ուսուցման առանձնահատկությունները, որոնք օգնում են դաստիարակել հոգևոր բարձր մշակույթով և բարոյական գիտակցությամբ օժտված անձ:

Գրականության դասավանդման հանդեպ մեր հատուկ դիրքորոշումն այն է, որ գրականության ուսուցման կարևոր նպատակը անձի հոգևոր ներաշխարհի գարգացումն ու աշխարհայացքի ձևավորումն է:

Այսօր աճող սերմնի հոգևոր ճգնաժամը պայմանավորված է գրականությունից հեռացմամբ: Վիթխարի է գրականության դերը անձի հոգեվոր գարգացման և դաստիարակության գործում: Դա այն հզոր ուժն է, որ անմիջականորեն ներազդում է անձի գգացմունքների, հոգևոր ներաշխարհի վրա: Այն կոչված է փրկելու մարդուն հոգևոր աղքատությունից:

Մենք այն համոզմանն ենք, որ այսօր դպրոցականները թույլ են պատրաստված, և սովորողների իմացական ու հոգական լիարժեք ընկալումը պահանջում է ուսուցչի հմտությունն ու աշխատանքը: Գրականության ուսուցման ընթացքում պահպանվում են մի քանի սկզբունքներ՝ ու առանձնահատկություններ՝

1. Առավելագույն ծանոթացում հայ ժողովրդական բանահյուսությանը և հայ դասականների ստեղծագործություններին:

2. Դիմնախնդրային մոտեցում դասընթացի կառուցմանն ու ուսումնասիրմանը: Յուրաքանչյուր դասընթաց ունի թեմատիկ, բարոյական, գեղագիտական, փիլիսոփայական և գրականագիտական կուր համակարգ:

3. Նայ ազգային պատմամշակութային աշխարհայացքի համադրումը սկզբունքորեն այլ, սակայն գեղագիտական և բարոյական չափանիշներով սերտ առնչություն ունի արևմտաեվրոպական և արևելյան համակարգերի հետ:

4. Կողմնորոշում դեպի ծրագրում ընդորրկված ստեղծագործությունների դաստիարակչական, հոգևոր-բարոյական, մշակութային արժեքները: Դասընթացը ոչ միայն ուսումնասիրում է հայ ժողորդի հոգևոր արժեքները, այլև դպրոցականներին հաղորդակից դարձնում այդ արժեքներին, ազգային ոգուն, ավանդույթներին ու ծեսերին: Դասընթացի յուրացումը անշուշտ կնպաստի դպրոցականների հոգևոր զարգացմանն ու դաստիարակությանը: Նայ գրականության ուսուցումը համաշխարհային գրականության համատեքստում թույլ է տալիս դպրոցականներին հաղորդակից դարձնելու համանարդկային հոգևոր մշակույթին:

**Արվեստի պատմության ուսուցման առանձնահատկությունները (10-12-րդ դասարան):** Ավագ դպրոցում պետք է շարունակվի դպրոցականների հոգևոր զարգացման բարոյական բարձր որակների, աշխարհայացքի ձևավորման, ինքնաճանաչման և ինքնարտահայտման գործընթացը: Ավագ դպրոցը անձի հոգևոր զարգացման ամենապատասխանատու և որոշիչ շրջանն է: Այդ առունով արվեստի պատմության դասընթացի ներմուծումը ավագ դպրոցի կրթության բովանակության մեջ անհրաժեշտ է և արդարացված:

Մեր կողմից առանձնացվել է «Արվեստի պատմություն» դասընթացի դասավանդման երեք հիմնական դրույթներ՝

1. «Արվեստի պատմություն» դասընթացը կազմում է մարդու գեղագիտական գիտակցության պատմական շրջափոխությունը (Եվոլյուցիան) և, կատարելով մի քանի գործառույթներ, նախատում է անձի հոգևոր զարգացմանը և պատմական հիշողության ձևավորմանը:
2. «Արվեստի պատմություն» դասընթացը մարդկության հոգևոր մշակութային արժեքների ստեղծման պատմության միասնության

ըմբռնումն է և այն գաղափարի ամրապնդումը, որ արվեստի պատմության մեջ տեղ ու դեր ունեն բոլոր ժողովուրդները: Ինչպես սեփական ժողովորդի, այնպես էլ այլ ժողովուրդների հավաքական կերպարը, որը ձևավորվում է մարդու մեջ, մեծապես կախված է նրանից, թե դպրոցական տարիներին ինչ են սովորեցրել նրան: «Արվեստի պատմության» դասընթացը մշակութային ժառանգության յուրացման արդյունավետ ուղիներից մեկն է:

3. Արվեստի պատմության դասավանդման ընթացքում ուսումնասիրվող նյութը տեղեկատվական նշանակություն ունի անձի հոգե-վոր պահանջնունքների բավարարման, աշխարհայացքի ձևավորման առօւմով:

Երկրորդ գլուխ երրորդ՝ «Ուսումնաօժանդակ ձեռնարկների նպաստող գործոնը դպրոցականների հոգևոր զարգացման գործընթացում» ենթագլխում ներկայացված են տարբեր ուսումնաօժանդակ ձեռնարկներն ու միջառարկայականկա պերը, որոնց միջոցով կարելի է ավելի արդյունավետ դարձնել դպրոցականների հոգևոր զարգացման ու դաստիարակության գործընթացը գրականության և արվեստի պատմության պարապմունքներին:

Աշխատանքի երկրորդ գլուխ չորրորդ ենթագլխում՝ «Դպրոցականների հոգևոր զարգացման մանկավարժական պայմանների փորձարարական հիմնավորումը» ներկայացված է գիտափորձն ու տրված են հիմնավորումները:

Դպրոցականների հոգևոր զարգացման և դաստիարակության սոցիալ-մանկավարժական պայմանների որոշակիացմանն ուղղված մեր հետազոտությունը՝ հիմնված փիլիսոփայական, սոցիալական, հոգեբանակավարժական գրականության, գիտափորձի արդյունքների վերլուծության և մեր մանկավարժական բազմանյա փորձի վրա, թույլ է տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

1. Դպրոցականների հոգևոր զարգացումը իրականանում է նրա սոցիալականացման գործընթացում մի շարք արտաքին և ներքին գործոնների ազդեցության շնորհիվ: Դրանց շարքին են դասվում որոշակի սոցիալ-մանկավարժական պայմաններ, ազգային հոգևոր-ավանդություններ, աշխարհագրական, ժողովրդագրական, բնական պայմաններ, որոնք իրենց կմիջն են դնում անձի հոգևոր-բարոյական կերպարի, հոգեկերտվածքի, աշխարհայացքի վրա:

2. Դպրոցականների հոգևոր զարգացումը իրականացվում է ինչպես ընտանիքում, սոցիումում, այնպես էլ դպրոցում և արտադպրոցական հաստատություններում հատուկ կազմակերպված ուսումնական և արտառուսումնական աշխատանքների շրջանակներում:

3. Հանրակրթական դպրոցում գրականության և արվեստի պատմության դասերը մեծ ներուժ են պարունակում դպրոցականների անձի հոգևոր զարգացման և դաստիարակության համար, եթե իրականացվում է նրանց ինացական, հուլզական-քարոյական և գործնական ոլորտ ների համալիր փոխներգործությամբ:

4. Անձի հոգևոր զարգացումն ու դաստիարակությունը ամբողջական համակարգ է, որը բնութագրվում է հոգևոր պահանջմունքներով, կյանքի, մարդկանց, ինքն իր անձի նկատմամբ, ստեղծագործական մտածողության, գեղեցիկի ընկալման կարողությունների և գեղագիտական, քարոյական զարգացմանը:

5. Անձի հոգևոր դաստիարակության հիմնախնդրի դրվագքը բոլոր ժամանակներում էլ տարբեր մտածողների կողմից տարատեսակ մեկնաբանություններ է ունեցել, սակայն իր կարևորությամբ և նշանակությամբ միշտ և ամենուր համարվել է գերակա:

6. Դպրոցական ների հոգևոր զարգացման և դաստիարակության գործուն առաջնահերթ դեր ու նշանակություն ունեն հանրակրթական դպրոցները, արտադպրոցական գեղագիտական կենտրոնները, ընտանիքները՝ իրենց միջև գործող փոխադարձ կապերով հանդերձ: Այս երեք գործոններն են որոշում սովորողների հոգևոր դաստիարակության և գեղարվեստաստեղծագործական մտածողության զարգացվածության աստիճանն ու բովանդակությունը: Հատկապես նշանակալի է ժամանակակից հայ ընտանիքի դերը:

7. Հանրահայտ է, որ մարդկային հասարակության նախօրրանում դեռևս մեծ տեղ է ունեցել բանահյուսությունը՝ վերջին հաշվով գրականությունը, որն ուղղեկցում է մարդկային հասարակությանը ցայսօր և կուղեկցի, գուցե՝ այլ դրսևորումներով, նաև՝ ապագայում: Այսինքն գրականությունն է բոլոր արվեստների նախահիմքը և մտածողության կազմավորման ու զարգացման գերագույն միջոցը: Ուստի գրականության հետ տարբեր արվեստների համադրումը բավականին արդյունավետ է, քանի որ սովորող նյութը ընկալում է տարբեր զգայարաններով՝ տեսողությամբ, լսողությամբ, զգայնությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում և ավելի քան 60 ուսումնաօժանդակ ծերնարկներում, որոնց մի մասն է ներկայացված ստորև.

1. Հարցն ու հարցադրումը որպես դասի կարևոր ուղղորդիչ բաղադրիչ, «Մանկավարժություն» ամսագիր, NN 3-4, 2006թ, էջ 73-79

2. Փոխաբերությունները Ս. Մեծարենցի բանարվեստում, «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր, NN 1-2, 2007թ, էջ 75-87
  3. Ս. Ֆիցջերալդի «Մեծն գերաբին» վեպը, «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր, NN 1-2, 2008թ, 40-52
  4. Գրականության և արվեստի այլ տեսակների միավորման արդյունավետությունը, «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր, N6 , 2011թ. էջ 37-40
  5. Գեղարվեստամանկավարժական գործոնի դերը հոգևոր դաստիարակության մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, էջ 269-275 :
1. Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու. 5-9-րդ դասարաններ, «Մակմիլան-Արմենիա» 2009, 352 էջ (համահեղինակությամբ)
  2. Նետառքրքաշարժ զրույցներ գրականությունից. հայոց լեզվի ուսուցման մի քանի մեթոդներ, «Մակմիլան-Արմենիա» 2009, 120 էջ, (համահեղինակությամբ)
  3. Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու. 10-12-րդ դասարաններ. «ՄանՄար» 2010, 252 էջ, (համահեղինակությամբ)
  4. Փոխադրության նյութերի ժողովածու. 5-12-րդ դասարաններ, «ՄանՄար» 2010, 252 էջ, (համահեղինակությամբ)
  5. Գրականության աշխատանքային տետր-7, «Էղիք Պրինտ» 2009, 48 էջ, (համահեղինակությամբ)
  6. Գրականության աշխատանքային տետր-8, «Էղիք Պրինտ» 2009, 48 էջ, (համահեղինակությամբ)
  7. Գրականության աշխատանքային տետր-9, «Էղիք Պրինտ» 2009, 48 էջ, (համահեղինակությամբ)
  8. Գրականության քրեստոնատիա-7, «Էղիք Պրինտ», 2009, 295 էջ, (համահեղինակությամբ)
  9. Գրականության քրեստոնատիա-8, «Էղիք Պրինտ», 2010, 352 էջ, (համահեղինակությամբ)
  10. Գրականության քրեստոնատիա-9, «Էղիք Պրինտ», 2011, 352 էջ, (համահեղինակությամբ)
  11. Հայ դասական գրողներ մատենաշար (45 գիրք), «Զանգակ-97», «Էղիք Պրինտ», 2006-2012թթ.

## **Маргарян Лусине Альбертовна**

Социально-педагогические условия духовного развития школьников на занятиях литературы и истории искусства

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.05 – теория и управление социально-культурной деятельностью.

Зашита диссертации состоится 19-го декабря 2013 года в 14.00 часов на заседании Совета ВАК “Педагогика” 020 Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна по адресу Ереван, 0010, Тигран Меци 17.

### **РЕЗЮМЕ**

**Актуальность темы.** Наше общество, для которого характерны периодические реформы и преобразования системы ценностей общественных норм, кажется, перенесло на второй план духовный мир человека, обеднив и исказив его. Сегодня, когда овеществляются жизнь и общественные отношения, все меньшее время и место уделяется духовной культуре, духовным идеалам, искусству и литературе. В результате всего этого происходит постепенный упадок духовных ценностей.

Благодаря влиянию литературы и искусства актуальность решения проблемы духовного развития личности обусловлена не только недостаточной разработанностью методики духовного развития, но и практической значимостью. Она обусловлена также общественно-культурными требованиями, предлагаемыми духовному образу школьника, что и сформировало выбор темы нашей диссертации.

**Целью исследования** является раскрытие и экспериментальное обоснование социально-педагогических условий духовного развития и воспитания школьников на уроках литературы и истории искусства.

**Задачи исследования.** 1. Раскрыть основные направления духовного развития и воспитания школьников, теоретические и практические аспекты, основанные на изучении психолого-педагогической, общественно-философской и искусствоведческой литературы.

2. Разработать модель духовного развития школьника.

3. Раскрыть и экспериментально обосновать социально-педагогические условия, обеспечивающие продуктивность духовного развития школьников на занятиях литературы и искусства, которые включают их духовные потребности, пути, средства, формы и методы удовлетворения их интересов.

4. Разработать и использовать на практике методические рекомендации для успешной организации процесса духовного развития и воспитания школьников на занятиях литературы и истории искусства.

**Научная новизна исследования.**

- Раскрыты и обоснованы актуальность и важность, методология, основы научности проблемы духовного развития и воспитания школьников в образовательном процессе.
- Раскрыты особенности, принципы, закономерности духовного воспитания школьников.
- Решены и опробованы модель духовного развития школьников и социально-педагогические условия (цели, задачи, содержание, виды, средства, методы) на занятиях литературы и истории искусства.

**Теоретическая значимость исследования.**

- Раскрыта сущность понятий “духовное”, “духовное развитие” и “духовное воспитание” как интерактивное качество личности, имея в основе относящуюся к данной проблеме научно-педагогическую литературу, концептуальные положения исследователей.
- Разработаны уровни признаков духовного развития и воспитания.
- Определены критерии духовного развития на занятиях литературы и истории искусства.

**Практическая значимость исследования.**

На основе теоретического анализа исследования разработаны научно-методические рекомендации, учебно-вспомогательные пособия, литература, программы внеучебных занятий и факультативные занятия (старшая школа), комплекс педагогических условий, которые будут полезны учителям, преподающим литературу и дисциплины, относящиеся к искусству в общеобразовательной школе, в организации процесса духовного развития школьников.

**Апробация исследования** проходила на кафедре истории, теории искусства и культурологии Армянского государственного педагогического университета им. Х. Абояна.

**Структура исследования.** Диссертация состоит из введения, двух глав, приложений, выводов.

## MARGARYAN LUSINE ALBERT

The socio-pedagogical conditions for *spiritual development of schoolchildren at the classes of literature and history of art*

13. 00.05 Request for the academic degree of candidate of pedagogical sciences with the specialization of “Theory and organization of Socio-Cultural Activities”

The dissertation defense will be held on December 19, 2013, at 14.00 at Higher Certification Commission’s “Pedagogy” 020 council meeting operating at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: 0010, Yerevan, Tigran Mets 17

## S U M M E R Y

**Actuality of the research:** Our transitional society, to which continuous readjustments and transformations of the general social norms, of value systems are peculiar, seems to have pushed aside spiritual human world, making it poor and distorted. Nowadays, when the whole life and social relations are materialized, less and less time and space is given to spiritual culture, spiritual ideals, arts and literature, the result of which is the ascending decline of spiritual values.

Due to the influence of arts and literature, the actuality concerning a person's spiritual development issue resolution is conditioned not only by insufficient processing of spiritual development methodology, but also by practical significance. It is also conditioned by socio-cultural demands proposed to the spiritual image of the school student and this is what influenced the choice of our dissertation topic.

**This research aims** to discover and to prove by scientific experiment the socio-pedagogical conditions of education and spiritual development of schoolchildren at the classes of literature and history of arts.

### **Objective of the research.**

1. To discover the main directions, theoretical and practical aspects of schoolchildren's spiritual development and education, relying on psycho-pedagogical, socio-philosophical and arts literature research.
2. To develop the model of spiritual development for schoolchildren.
3. To discover and prove by scientific experiment socio-pedagogical conditions that ensure the effectiveness of schoolchildren's spiritual development at the classes of literature and history of art, which

- include the ways, means, forms and methods to satisfy their spiritual demands and interests.
4. To develop and apply in practice methodical instructions at the classes of literature and
  5. history of art to organize the spiritual development and education processes effectively.

**Scientific novelty of the research:**

- The actuality and importance, methodology and academic theoretical principles of the problems of schoolchildren's spiritual development and education have been discovered and proved in the educational process.
- The peculiarities, principles, regularities of schoolchildren's spiritual development have been discovered in public education.
- The spiritual development model and socio-pedagogical conditions (goals, problems, contents, forms, means and methods) have been determined and tested during the classes of literature and history of art.

**Theoretical value of the research:**

- The concepts "spiritual", "spiritual development", "spiritual education", as a person's integrative qualities, have been discovered, relying on academic-pedagogical literature and researchers' conceptual points.
- Levels of schoolchildren's spiritual development and education have been developed.
- Spiritual development criteria have been defined at the classes of literature and history of art.

**Practical value of the research:** Based on theoretical analysis of the research, pedagogical conditions complex - scientific methodological instructions, learning supportive materials, literature, programs of extracurricular classes, elective courses (high school) - have been developed, which can be useful for arts and literature teachers in public schools organizing the process of schoolchildren's spiritual development.

**Approbation of the research** has been performed at the chair of art history, theory and culturology of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

**Research structure:** The dissertation consists of an introduction, two chapters, appendices and a conclusion.

